«Биолог. ж. Армении», т. XXXVII, № 7, 1984

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՐԻ ԵՎ ՄԵՂՐԱՄԱՄԻՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԺՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՒՄ

Ա. Օ. ԴԱՍՊԱՐՅԱՆ

Հոդվածում ձեռագրերի հիման վրա ներկայացված է մեղրի և մեղրամոմի բուժական կիրառությունը միջնադարյան հայ բժշկապետ Գրիգորիսի դեղատոմսերում։ Տարիների մեր պրպտումների շնորհիվ գտնվել ու օգտագործվել են այդ դեղատոմսերում առաջարկված բույսերը, ծաղիկները, արմատներն ու այլ նյութեր, որոնք մեղրի ու մեղրամոմի հետ կիրառելով կյանքում՝ ժողովրդական բժշկության մեջ տվել են լավ արդյունք։

Բալանի բառեր. միջնադարյան դեղատոմսեր, մեղր, մոմ։

Հին և միջնադարյան հայ ժողովրդական բժշկության մեջ որպես դեղամիջոց երբեմն առանձին, երբեմն էլ ուրիշ նյութերի հետ իբրև դեղատոմսերի բաղադրություն, օգտագործվել է նաև մարդու փոքրիկ բարեկամի՝ մեղվի արտադրանքը՝ մեղրն ու մեղրամոմը, հաճախ էլ՝ մեղվաթույնը։ Ինչպես վկայում են գրիչները ու ժողովրդական բժիշկները, այն միշտ էլ բարելավել է հիվանդի վիճակը։

XIII դարի հայ բժշկության մեջ իր արժանի տեղն ունի Գրիգորիս բժշկապետին վերագրվող «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» կոչվող բժշկարանը, որը բաղկացած է դեղագիտարանից, բժշկարանից և զուշակողական-ախտաբարական հոդվածներից։ Այդ բժշկարանը, որից օգտվել ենք, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի 415 համարի տակ պահվող ձեռագիրն է, որն արտագրվել է մեկ այլ ավելի վաղ շրջանի ձեռագրից 1465—1473 թ.թ.՝ Մարպիանի որդի տեր Հակոբ գրչի կողմից։ Հենց այդ ձեռագիրն է, որ վերագրված է Գրիգորիս բժշկապետին։ Ձեռագրի ստույգ տարեթիվը հայտնի չէ, որովհետև պակասում են նրա տկզբի թերթերը։ Գրիգորիս բժշկապետը քաջածանոթ է եղել մ. թ. ա. V դարի հույն փիլիսոփա Հիպոկրատի, հռոմեացի Գալենոսի (II դ.), Դիոսկորիդեսի (I դ.) աշխատություններին և օգտվել է Մխիթար Հերացուց։ Գրիգորիսը ազատ տիրապետել է հունարենին, արաբերենին, պարսկերենին, ասորերենին, լատիներենին և միևնույն ժամանակ եղել է հմուտ հայագետ։

Գրիգորիսի սույն բժշկարանն իր ուրույն տեղն ունի հայ մատենագրության մեջ՝ որպես ընդհանուր ախտաբանության հարցերին նվիրված տեսական ու գործնական բժշկության մի եզակի հուշարձան, որի նշանակությունը դուրս է գալիս հայագիտության շրջանակներից։ «Գրիգորիսը,— ինչպես գրում է Ա. Կծոյանը,— այնպիսի հիվանդություններ է ախտորոշել և տվել դրանց մահճաբուժության (կլինիկական) եղանակները, որոնք հարյուրավոր տարիներ հետո են միայն առաջարկվել այլ երկրներում» [1, էջ XLII—XLVII]։ Այսպես, Գրիգորիսը խոսել է հիվանդության վարակի փոխանցման ճանապարհների և ուղիների մասին (դրանք են՝ հիվանդի հետ շփումը, օդը, իրերը, և այլն), որոնց Եվրոպայում Ջ. Ֆրակաստորոյը անդրադարձել է 1546 թ.։ Հիվանդի օրգանիզմի նյութափոխանակության հարցերով իտալացի բժիշկ-գիտնական Սանտո-

ռիոն (1561—1636 թթ.) զբաղվել է Գրիգորիսից երեք հարյուր տարի հետո միայն։ Ինչպես նաև հայ բժշկապետին են պատկանում ուղեղի դեկավարման ֆունկցիայի, հիվանդության խմորման շրջանի, արտաթորանքի զննման առաջարկությունները, դեղնախտի ախտորոշման ու բուժման տեսակները, որոնք առաջ են քաշվել XIX դարում գերմանացի գիտնական Ռուդոլֆ Վիրխովի կողմից։ Կամ՝ մարդու անատոմիական և ֆիզիոլոգիական հետազոտությունների միջոցով օրգանիզմում եղած ախտաբանական պրոցեսների հայտնաբերումը, որը երեք հարյուր տարի հետո է միայն առաջարկել անգլիացի հայտնի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը (1561—1626 թթ.) [1, էջ LXXI]։ Հետագայում էլ, ինչպես Ստեփան Վարդանյանն է նկատում, Գրիգորիսը, շարունակելով բժշկապետ Մխիթար Հերացու լավագույն ավանդույթները, ժամանակի հայ բժշկության մեջ եղած մահճաբուժության հարուստ նյութերն ու իր փորձերը և ուսումնասիրելով հիվանդությունների պատճառագիտության ու ախտաբանության հետ կապված հարցերը, մանրամասն կանգ է առել տենդերի ու ներքին օրգանների հիվանդությունների նկարագրության վրա՝ հիվանդության ընթացքին հետևելով ուղղակի հիվանդի մահճակալի մոտ [2, էջ 31—32]։ Այդ նկարագրությունների մանրամասները վկայում են, որ նա որոշ դեպքերում օգտվել է նաև դիահերձումների տվյալներից, ինչպես, օրինակ՝ թոքերի խոցերի, խուլերի, քարերի, թոքաբորբ հիվանդության մասին իր եզրակացություններում։

Գրիգորիսը հայտնի բժիշկ լինելով հանդերձ, եղել է նաև հիանալի դեղագործ։ Նա թողել է զանազան հիվանդություններ բուժելու մոտ 300 դեղատոմս։ Դրանցից բերենք միայն 415 ձեռագրի 2ա-55բ թերթերում գրված դեղատոմսերը, որոնց բաղադրության մեջ կա մեղր և մեղրամոմ։

Դեմքի վրայի մանր ցաները (չիպան) վերացնելու համար Գրիգորիսն առաջարկում է վերքի վրա քսել կանաչ օշինդրի, քացախի, նշտարի, յուղի և մեղրի խառնուրդը. «Առ նշտերն քէրէ և սրբէ և ապայ զսոդ էղերսի քացախն խառնէ. և ի մեղրն. և յաղն, և կանաչ աւշանն. և ի վրա շփէ» [1, էջ 2բ]։

Սրտի դողոցի և ստամոքսի ցավի ժամանակ խորհուրդ է տալիս հիվանդին ուտացնել օշինդրի, անիսոնի, զաֆրանի, քարավուզի սերմի, սմբուլի, կղբու ձվի և մեղրի բաղադրությունը. «Առ օշինդր և սապր ութ-ութ գրամ ռեւանդիսենի վեց գրամ, վայրի անիսոն-զաֆրան, քարավսի հունդ չորս-չորս գրամ, մուշկ, սմբուլ, սատէճ մուռ երկու-երկու գրամ, կղբու ձու, մեկ գրամ ծէծէ և մաղէ ի մեղր խառնէ և երբ պիտենայ, տուր մեկ դրամ և կէս զշարպաթն» [1, էջ 11բ]։ Նույն հիվանդությունը բուժելու նպատակով Գրիգորիսը հանձնարարում է մեկ այլ դեղատոմս՝ ղարանֆուլի, դարիսենի, սմբուլի, օշինդրի, զաֆրանի, մաստաքենի և մեղրի համամասնությամբ. «Առ ղարանֆուլ, դարիսենի, սմբուլ միայչափ աւշնան դիւոյ դունկ՝ նարմուշկ ֆռանճմուշկ երկերկու բաժին զաֆրան մաստաքէ մեկ-մեկ բաժին ծէծէ և մաղէ և մեղրն խառնէ աւգտէ առտծով» [1, էջ 14ա]։

Ստամոքսացավը հանգստացնելու համար հանձնարարում է հլելիճ (հընդկապտուղ) քապուլի, կուտն հանած ամլեճի, նշի ձեթի, մեղրի խառնուրդը. «Առ հլէլիճ դեղին ու քապուլի, հլէլիճ ամլէճ կուտն հանած, սև հլէլիճ, միայչափ ծէծէ և մաղէ և նշին ձիթով խառնէ և ապայ խառնէ ի մեղրն ու քաֆն առած լինի, ու լից յապիկի ման շարպաթն երեք դրամ»։

Գեր մարդկանց առնականությունն ավելացնելու համար Գրիգորիսն առաջարկում է հնդկական ամլեճ ծառի ծեծած կուտը, երկար պղպեղը, քունջիթը,

նռան կուտը, վառվռուկը, կակաչը ծեծել, մաղել, մեղրով շաղախել և ուտել. «Հլելիճ սև և քաբուլի՝ բլալիճ, ամլէճ զկուտն հանու ծէծէ ֆլֆլ երկայն պղպեղ երեք-երեք դրամ, զնճպիլ պուզիտայն, պասպասայ՝ շալտրէճ հնդի, վայրի ստեբղին՝ վառվռուկ կարմիր և վայրի նռան հունտ, շուշմայ կէղևած, շաքար, տապարզի սպիտակ խաշխաշ սպիտակ և կապմիր մեկ-մեկ ծէծէ և մաղէ ու շաղղէ մեղրոտաւ որ քաֆն առած է, բայց յառաջն կովու իւղով շաղղէ և ապայ ի մեղրն շարպաթն երեք գր» [1, էջ 13 աբ]։

Աղիների ցավերի դեպքում հանձնարարում է լեռան և գետի դաղձը՝ պետրասալիոն, սեսալիոս (12-ական գրամ), քարավուզի հունդ, պապունիճ (4-ական գրամ), կապնդեղ (15 գրամ), սև պղպեղ (44 գրամ) ծեծել և մաղել, այդքան էլ մեղր խառնել ու տաք ջրով խմել [1, 13 բ]։ Գրիգորիսը դեղ է առաջարկում նաև օձի, կարիճի և շան կծածը չեզոքացնելու համար՝ 2-ական գրամ զրևանդ, ոլոռ, սատապի հունդ, դափնու տերև ծեծել, մաղել, մեղրով շաղախել և դնել կծածի վրա [1, էջ 14ա]։

Լյարդի և սրտի ցավերը հանգստացնելու համար առաջարկում է՝ սպիտակ կակաչը, չոր գինձը, սեխի կուտը 3-ական գրամ, վարդի, եղեգնի փոշու, եղան լեզվի մեկական բաժին հոռոմ կավի կես բաժին ծեծել, մաղել, մեղրով շաղախել և ուտել [1, էջ 14ա]։

Մտքամոլոր մարդու միտքը պայծառեցնելու համար առաջարկում է բաշխտակի, կովի յուղի, մեղրի և ուտի սերմի խառնուրդ. «Առ ուտի հունդ երկու դրամ, բաշխտակ մեկ դրամ, ծէծէ և կովու իւղով խառնէ, և մեղրով խառնէ ի բան տար» [1, 14ա]։

Ծռված բերանն ուղղելու դեղամիջոց է չամանը, խունկը, պղպեղը, զարանֆուլը, ծիթրոնը, զաֆրանը, ծեծել, մաղել ջրով և մեղրով շաղախել ու խմել [1, 17ա]։

Հազը բուժելու համար Գրիգորիսը հանձնարարում է հայխունկը, մատուտակը, սմբուլը, զմուռը քթիրան մեղրի հետ. «Առ սլեխայ ու հայխունկ տաստաս դրամ, մատուտակ քերած երկու դրամ, զմուռ. սմպուլ, զթիրայ, չորս-չորս դրամ, ծէծէ և ի մեղր, խառնէ, քանի որ, պիտենայ և ի բան տար» [1, 25բ]։

Պիսակը (բորոտություն) բուժելու դեղամիջոց է՝ ճարճատուկի սերմը, ցմախտակը, մանանեխը, սեխի և բողկի հունդը ծեծել, մաղել և մեղրով շաղախել. «Առ ճարճրիհունդ սատրէճ, բողկի հունտ, ցմախտակ, մանանեխ, սեխի հունտ, միայչափ ծէծէ և մաղէ քացախով և մեղրով և ի բաղնիքն քսէ» [1, 30բ]։

Բորոտության մեկ այլ դեղամիջոց է՝ բողկի և կոտեմի սերմերը, կանաչ օշինդրը ծեծել, մաղել, քացախով և մեղրով շաղախել, շփել վերքերին ու որոշ ժամանակից հետո բաղնիքում լողանալ [1, 35ա]։

Գրիգորիսը մազերը սևացնելու և դրանց գույնը սև պահելու համար խորհուրդ է տալիս գարե ալյուրը շաղախել, թթվացնել, ապա խառնել 10 գրամ այրված պղինձ (ռասուխտ), տորոել քացախով և այդ բաղադրությամբ շփել մազերն ու 12 ժամ ծածկել խաղողի տերևով։ Հետո գլուխը այրել, աղալ, մաղել ջրով, շաղախել, շփել մազերն ու նորից ծածկել խաղողի տերևով՝ դարձյալ 12 ժամ։ Լվանալուց հետո մազերը կունենան լավ սև գույն [1, 31ա]։

Հայկական ՍՍՀ ԳԱ Հնագիտության
և ազգագրության ինստիտուտ

Ստացված է 29. II. 1984

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգոր Նարեկացի «Մեկնութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 415։
2. Ս. Վարդանյան «Բժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում», Երևան, 1982։

ԱԿԱԴ.